

ԲԱՆԱԿԵՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ



ՄԻՋԱՆԿՅԱԼ ԳԻՄՔԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԶԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱԶԵՎԱՅԻՆ ԶԱՐԱՑՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Ս. Ա. ՉԱԼՍՏՅԱՆ

Ժամանակակից հայերենի գոյականական և բայական բառաձևերի հարացույցները գիտական հանգամանալի քննության են ենթարկված մի շարք ուսումնասիրություններում¹: Այնուամենայնիվ կան բառաձևերի կազմության եղանակներին, հարացույցների ոչ ելակետային միջանկյալ հիմքերին և հարակից այլ հարցերի առնչվող խնդիրներ, որոնք լրացուցիչ լուսաբանման կարիք են զգում:

Ժամանակակից հայերենի բառաձևային շարքերից (հարացույցներից) շատերը կազմության եղանակի տեսակետից զգալիորեն տարբերվում են իրարից: Գոյականների և գոյական (հոլովվող)-դերանունների հարացույցները կազմվում են հետևյալ հիմնական երեք եղանակներով:

ա. Ելակետային բառարանային բառը (որպես հարացույցի առաջին անդամ՝ բառաձևը) հիմք է դառնում հարացույցի մեջ մտնող բոլոր բառաձևերի համար, որին պարզ կցումով (հոլովման պարագայում սեռական-տրականում որոշ դեպքերում նաև հերթագայությամբ) ավելանում են հոլովական ու թվային վերջավորություններն ու հոդերը: Այսպես են կազմվում, օրինակ, ժամանակակից հայերենի ընդհանրական ի հոլովման պատկանող բառերի հոլովական հարացույցները (սիրտ^օ, սրտ-ի, սրտ-ից, սրտ-ով, սրտ-ում. նույն կերպ նաև հոգնակին՝ տներ, տներ-ի, տներ-ից, տներ-ով, տներ-ում. ինչ^օ, ինչ-ի, ինչ-ից, ինչ-ով, ինչ-ում ևն): Նույն սկզբունքն է գործում առկայացման բառաձևերում (տուն^օ - տուն-ը՝ տուն-ս՝ տուն-դ):

բ. Ձևակազմությունը սկսվում է նույնպես ելակետային բառաձևից (ելակետային հիմքերից), բայց հարացույցի ոչ ելակետային, միջանկյալ անդամներից մեկը իր հերթին հիմք է դառնում հաջորդ բառաձև(եր)ի համար: Հարացույցներում այս սկզբունքով են կազմվում այ // ո ներքին թեքման և ոչ արտաքին թեքման հոլովումներին պատկանող բառերի բառաձևերը, ինչպես՝ հայր, հոր^օ, հոր-ից, հոր-ով, քույր^օ, քր-ոչ, քրոջ-ից, քրոջ-ով ևն: Մասամբ այս եղանակով են կազմվում վա հոլովման պատկանող ժամանականիշ բառերի հարացույցները, ինչպես՝ օր^օ, օր-վա, օրվան-ից, (ձևավոր հիմք), բայց՝ օր-ով, օր-ում, տարի - տարվա - տարվանից, բայց՝ տար-ում ևն:


Դերանվանական հոլովման պատկանող բառերի հոլովական հարացույցներում բացառական, գործիական և, եթե կան, ներգոյական հոլովաձևերը կազմվում են նույն եղանակով՝ տրականի տարահիմք բառաձևերից, ինչպես նա, նրա, նրան, նրան-ից, նրան-ով, նրան-ում, դու, քո, քեզ, քեզն-ից, քեզն-ով, քեզն-ում, քառանդամ հարացույցով՝ ով, ում, ում-ից, ում-ով ևն:

գ. Այն դեպքում, երբ գոյականական բառաձևում առկա է երեք տարբեր բնույթի վերջավորություն (հոգնակիական, հոլովական և առկայացման՝ հոդ), գործում է ձևակազմական այլ սկզբունք, քան վերևում հիշվածները: Նման հա-

¹ Տե՛ս, հատկապես, Գ. Բ. Զահուլյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները («Ձևաբանություն» բաժինը), Եր., 1974:

բացույցներում ելակետային բառաձևից սկսած յուրաքանչյուր նախորդող (ձախակողմյան) բառաձև հիմք է դառնում հաջորդողի (աջակողմյանի) համար², ինչպես՝ մատիտ-մատիտներ-մատիտներից-մատիտներիցս (ընդգծված են հիմքերը):

Այսպիսով ստացվում են գոյականական ձևակազմության հետևյալ երեք հիմնական կառուցվածքները:



III ծառթ - ծառեր - ծառերից - ծառերիցս

Հարացույցներում ոչ ելակետային այն բառաձևերը, որոնք հիմք են դառնում հաջորդող բառաձև(եր)ի համար, կոչենք միջանկյալ հիմքեր (գծապատկերներում միջանկյալ հիմքերը ընդգծված են):

Ժամանակակից հայերենի հոլովման համակարգում, բացի վերևում նշվածներից, միջանկյալ հիմքեր կան նաև հետևյալ բառաձևային շարքերում. աղջիկ-աղջկա-աղջկանից, աշուն-աշնան-աշնանից, գիտություն-գիտության-գիտությամբ, կանայք-կանանց-կանանցից, մահ-մահվան-մահվանից-մահվամբ, մարդիկ-մարդկանց-մարդկանցից-մարդկանցով, մերոնք-մերոնց-մերոնցից, ուսում-ուսման-ուսմամբ ևն:

Այստեղ կարելի է հիշել նաև մարդ-մարդու-մարդուց, գինի-գինու-գինուց բառաձևերի նմանատիպ շարքերը՝ բացառականը դիտելով որպես սեռական-տրականից -ց-ով կազմություն³: Հասկանալի է, որ միջանկյալ հիմքերի մասին կարող է խոսք լինել ոչ պակաս քան եռանդամ հարացուցային շարքերի դեպքում:

Երբ փորձում ենք նույն տեսանկյունից անդրադառնալ բայական ձևակազմությանը, ապա անմիջապես առաջանում է հետևյալ խնդիրը. արդյո՞ք բոլոր կառուցվածքային տիպարների անորոշները առաջնային, ելակետային բառեր (բառաձևեր) են:

Ամենապարզ դիտարկումն իսկ ցույց է տալիս, որ անորոշի կառուցվածքային տարբեր դրսևորումները՝ տիպարները, նախ կարելի է բաժանել երկու խմբի՝ աններածանց (գրել, կարդալ), որ ավանդաբար պարզ բայ են կոչում (հակառակ բոլորի կողմից ընդունված այն ճշմարտությանը, որ անորոշը միշտ բաղադրյալ է) և ներածանցավոր (նշույթավոր) (տեսնել, փախչել, հեռանալ, մոտենալ, հեռացնել, մոտեցնել, փախցնել, գրվել, գրտել): Ներածանցավորներն էլ իրենց հերթին ըստ կաղապարների գործունության բաժանվում են երկու խմբի՝ գործուն (պատճառականներ, կրավորականներ, բազմապատկականներ, ինչպես և հիմնականում գոյականներից և ածականներից բաղադրվող՝ -անալ-ով բայեր) և ոչ գործուն, որոնք են իրենց կազմում -ն-, -չ- և -են- ներածանց ունեցող, ինչպես և ինքնուրույն բառային գործածություն չունեցող հիմքերից -ան-ով բայերը (տեսնել, փախչել, ուզենալ, ընթանալ ևն):

Ակնհայտ է, որ վերոհիշյալ կազմության բոլոր տիպարների անորոշները ձևակազմական նույն մակարդակի միավորներ չեն:

² Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 159:

³ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 194-ի ամփոփիչ աղյուսակը:

Ամենից առաջ, համապատասխան աններածանց անորոշներից է ներածանցվել պատճառականների, կրավորականների և բազմապատկականների մեծ մասը: Դրանք բառարանային բառեր լինելով հանդերձ՝ նաև, հասկանալի է, ոչ առաջնային բառաձևեր են (հմմտ. գրել - գրվել - գրուովել, կանգնել-կանգնեցնել ևն): Հիշյալ կազմության բայերի մյուս մասը ածանցյալներ են «սուկածանցավոր» բայերից (հմմտ. հազնել- հազնվել // հազցնել, դիպչել-դիպցնել // դիպցվել, թռչել-թռչկոտել-թռչկոտեցնել // թռչկոտեցվել, իմանալ-իմացնել // իմացվել ևն): Պատմականորեն աննշույթ անորոշներից չեն սերվել իրենց կազմում -ն-, -չ-, -են- ներածանց ունեցող և -ան- ներածանցով այն բայերը, որոնց հիմքերի խոսքամասային պատկանելությունը հայտնի չէ (ինքնուրույն բառային գործածություն չունեն), ինչպես՝ բաղկանալ, զլանալ, իմանալ, լվանալ ևն: Հայտնի է, որ հիշյալ բոլոր ածանցներն էլ անորոշի լ-ի և կատարյալի ց-ի հետ հնդեվորպական ծագմամբ հնագույն միավորներ են, որոնք, սակայն, հայերենին հատուկ իրենց իմաստային ծանրաբեռնվածությունը և գործածությունը ստացել են հայերենում և այդ տեսակետից զուտ հայկական երևույթներ են: Փոքր-ինչ պատմությանը անդրադառնալով նշենք, որ, ըստ Գ. Բ. Ջահուկյանի ժամանակագրավորման⁴, -ան-ի համապատասխան հնիս. *ne-ն (Հր. Աճառյանի տերմինով ոճգական⁵) հնիս.-ում եղել է միջաձանց և վաղնջական հայերենում է վերջնականապես վերածվել արմատին հաջորդող բաղադրիչի՝ փոխարինվելով * -ne- վերջնամասնիկով, իսկ -ն- և -չ- ներածանցավոր բայերի, որպես ներկայի հիմքակազմիչների և ցույական (-ց- ունեցող) կատարյալների ձևավորման գործընթացը ավարտված էր հնագույն հայերենում: Չմոռանամ միաժամանակ հիշեցնել, որ կատարյալի արմատական ձևերը պատմականորեն նախնական են բաղադրյալներից: Ըստ երևույթին վաղնջական հայերենի հետ պիտի կապվի նաև հնիս. ծագմամբ (-*lo-ից) լ-ի անորոշակերտ (բայակերտ) իմաստավորումը և գործառնությունը: Ինչ վերաբերում է -են-ին, ապա այն -ան-ի դիրքային հնչյունափոխական տարբերակն է (ի-ով և ե-ով վերջացող հիմքերում ի+ա, ե+ա > ե հնչյունափոխությամբ): Այստեղից բխում է, որ իրենց կազմում -ն-, -չ- և -են- ներածանցով և ինքնուրույն բառային գործածություն չունեցող արմատական հիմքերով -ան- ով անորոշ դերբայները չէին կարող ծագած լինել աններածանց անորոշներից՝ և արդի հայերենի կառուցվածքի համաժամանակյա նկարագրության դեպքում պարզապես պետք է թվարկվեն որպես բացառություններ և անորոշի նման իրենցից կազմվող բառաձևերի համար դիտարկվեն որպես աննշույթ (բայց ներածանցավոր) ելակետային ձևեր, ինչպես՝ տեսնել-տեսնելու ևն, հագնալ-հագնում ևն⁶:

Այս դիտարկումներից հետո արդեն կարելի է անդրադառնալ ժամանակակից հայերենի բայական ձևակազմությանը մեզ հետաքրքրող բառաձևերի կազմության եղանակների և միջանկյալ հիմքերի տեսանկյունից: Նախ դերբայական ձևակազմության մասին: Վերևում ասվածից պարզ դարձավ, որ պատճառական, կրավորական և բազմապատկական անորոշները կազմվում են ներածանցմամբ՝ ածանցի հավելմամբ աննշույթ կամ նշույթավոր բառաձևային հիմքի մեջ (գրել // գրվել, կանգնել // կանգնեցնել, ցատկել // ցատկոտել, տեսնել // տեսցնել ևն):

⁴ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 228, 349:

⁵ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատոր IV, Ա գիրք, Եր., 1953, էջ 349 և այնուհետև:

⁶ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 223:

⁷ Բայական համակարգի մասնիկների ծագման վերաբերյալ հայերենագետների կարծիքների ամփոփումը տե՛ս Թ. Ղարազյուլյան, Հին հայերենի խոնարհման համակարգի ծագումը (Եր., 1961), իսկ պատմական սպառիչ տվյալներ՝ Հր. Աճառյան, նշվ. աշխ., հատկապես «Հայերենի բայական քննությանը և ծագումը» բաժինը, էջ 345-359:

Ապառնի (ապակատար) I ու II (գրելու, գրելիք) և անկատար II (գրելիս) դերբայների կազմության դեպքում գործում է վերջամասնիկավորումը՝ անորոշ դերբայ անփոփոխ հիմքով: Անկատար I-ը (գրում են), ե խոնարհման աններածանց, կրավորական և բազմապատկական բայերի վաղակատարը և հարակատարը կազմվում են անորոշից՝ համապատասխան վերջավորություններ ստանալով -ել-ի փոխարեն (գրել, գրած), իսկ վաղակատարը և հարակատար դերբայների մյուս կառուցվածքային տիպարները կազմվում են կատարյալի հիմքից նույն եղանակով (կարդալ-կարդացել // կարդացած, տեսնել-տեսել // տեսած են): Ենթակայականի -ող-ը նույն կերպ դրվում է ել խոնարհման բայերի անկատարի, իսկ ալ խոնարհման բայերի՝ կատարյալի հիմքի վրա (գրող, տեսնող, փախչող, մտեցնող, տեսցնող, կարդացող, մտեցող, հեռացող են):

Գայթակղիչ է ժխտականի կազմությունը ևս բացատրել որպես վերջամասնիկավորում՝ ել խոնարհման բայերից ի-ով, ալ-ի դեպքում՝ ա-ով, բայց դա հակասում է բայական այդ հիմքային ձևի առաջացման բուն պատմական ընթացքին (չեմ գրի > գրի, չեմ կարդալ > կարդա), և լրջորեն չի կարելի պնդել, թե այդ ձևում ի - և և ա - և արդեն քերականական իմաստ արտահայտող մասնիկներ են:

Բայական համադրական դիմավոր բառաձևերից անցյալ կատարյալը և հրամայական հոգնակին կառուցվածքային բոլոր տիպարներում կազմվում են վերջամասնիկավորմամբ՝ կատարյալի հիմքից, իսկ ըղծականի ապառնին և անցյալի ապառնին անկատարի հիմքից՝ համապատասխան վերջավորությունների կցմամբ (գրեցի, մտեցրի, տեսա, փախա, գրեմ, գրեի, տեսնեմ, փախչեմ են):

Բայաձևերի կազմության բոլորովին այլ եղանակ է առկա պայմանական բայաձևերի կազմության դեպքում: Դրանք, ինչպես հայտնի է, կազմվում են համապատասխան ըղծականներից նախամասնիկավորմամբ (գրեմ-կգրեմ, գրեի-կգրեի են):

Նախամասնիկավորմամբ՝ չ- նախածանցի հավելմամբ են կազմվում նաև համադրական բայաձևերի ժխտականները (բացառությամբ պայմանականի վերլուծական ժխտականի՝ չեմ գրի են): Այսպես կոչված «կախյալ» դերբայները բուն իմաստով բառաձևեր չեն և, բնականաբար, ժխտական չունեն:

Ձևակազմական հաջորդ եղանակը, որը գործում է վերլուծական բայաձևերի կազմության դեպքում, որպես վերջահար անշեշտ բառ (էնկլիտիկա) հանդես եկող օժանդակ բայի ներկա և անցյալ անկատար դրական բայաձևերի հարադրումն է (վերջահարում)⁸ «կախյալ», բառային հիմնական շեշտ կրող՝ դերբայական հիմքերին (գրո՛ւմ եմ // էի, գրելո՛ւ եմ // էի, կարդացե՛լ եմ // էի են): Այս բայերի, ինչպես և պայմանականի, ժխտական բայաձևերի կազմության ժամանակ վերջահար անշեշտ բառի գործառությամբ հանդես են գալիս «կախյալ» բայական հիմքերը՝ օժանդակ բայի բառային հիմնական շեշտը կրող⁹ ժխտական ձևի նախահարմամբ¹⁰ (չե՛մ գրում, չե՛մ գրի): Պիտի- ով հարկադրականի կազմության ժամանակ անշեշտ է մնում պիտի-ն, չպիտի-ով ժխտականի դեպքում՝ որպես միջանկյալ հիմք հանդես եկող ըղծական բառաձևը (պիտի գրե՛մ, չպիտի՛ գրեմ):

⁸ Տե՛ս Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Բ. Ղարազոյան, Լեզվաբանական բարարան, Եր., 1975 (վերջահար բառ, վերջահարում, նախահար բառ, նախահարում բառահոդվածները):

⁹ Տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 22:

¹⁰ Տե՛ս նույն տեղը:

¹¹ Տե՛ս Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Բ. Ղարազոյան, Լեզվաբանական բարարան, նշվ. բառահոդվածը:

Այսպիսով՝ բայական բայաձևերի կազմության ժամանակ գործում են ձևակազմության հետևյալ եղանակները. ներածանցում (ներմասնիկավորում), վերջամասնիկավորում (մասնիկի պարզ կցմամբ կամ հերթագայությամբ), նախածանցում (նախամասնիկավորում), նախահարում, վերջահարում:

Շարադրանքից պարզ երևում է, որ բայական հարացույցներում ևս կան մի շարք ոչ առաջնային, ոչ ելակետային բառաձևեր, որոնք որպես միջանկյալ հիմքեր են ծառայում հարացույցների հաջորդող բայաձևերի կազմության համար: Այդպիսիք են աններածանց անորոշներից կազմվող բազմապատկական, կրավորական և պատճառական բայերը՝ նրանցից կազմվողների համար, իսկ ըղձականները՝ պայմանականների և հարկադրականների համար:

С. А. ГАЛСТЯН - *Промежуточные основы в парадигмах словоформ современного армянского языка.* - В статье дается анализ способов образования словоформ и промежуточных основ в парадигматических рядах склонения и спряжения современного армянского языка.